



ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)




ԵՐԵՎԱՆԻ
ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԴԱՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(2), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՍ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Рекомендовано к публикации решением ученого совета Ереванского государственного университета

Recommended for Publication by the Yerevan State University Academic Council Decision

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

Լախագահ՝ Արամ ՄԻՄՈՆՅԱՆ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՍԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻՎԱԶՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆԻ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Յամբուրգ, Գերմանիա)
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սուշել ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարին ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒԿԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԲԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(2), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 480 էջ:
Scientific Artsakh, № 1(2), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 480 pages.
Научный Арцах, № 1(2), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 480 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 1-ին համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Շվեյցարիան և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող 50 անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

In the first issue of the «Scientific Artsakh» journal in 2019 the works on topical issues of social sciences by 50 well-known and young scientists representing Republic of Armenia, Republic of Artsakh, Republic of Belarus, the Islamic Republic of Iran, Poland, Switzerland and the Russian Federation are published.

В первом номере за 2019-ый год журнала «Научный Арцах» опубликованы работы по актуальным проблемам общественных наук, авторами которых являются 50 известные и молодые ученые, представляющие Республику Армения, Республику Арцах, Республику Беларусь, Исламскую Республику Иран, Польшу, Швейцарию и Российскую Федерацию.

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент

Мареk ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Гарик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Աղավնիկ Մարտիրոսյան. Չվիադ Գամսախուրդիայի ժողովրդագրական քաղաքականությունը Չավախքում 1990-1993թթ.391
Aghavnik Martirosyan. Zviad Gamsakhurdia's Demographic Policy in Javakhk in 1990-1993
Агавник Мартиросян. Демографическая политика Звиада Гамсахурдия в Джавахке в 1990-1993 годах

Արման Մարտիրոսյան. Դաշնակիցների քաղաքականության վերափոխումը Հայկական հարցի վերաբերյալ 1919-1923 թվականներին.....400
Arman Martirosyan. The Revision of the Political Views Regarding Armenian Question During 1919-1922 by its Allies
Арман Мартиросян. Пересмотр политических взглядов союзников в отношении Армянского вопроса в 1919-1923 годах

Զբիգնև Տ. Շմուրլո. Գաղափարների խաչադիտում լեհական հետք Արարատի և Սևանա լճի408
Zbigniew T. Szmurlo. Collision Of Destinies: The Polish Trace on Ararat and Lake Sevan
Збигнев Т. Шмурло. Скрещение судеб: польские следы на Арарате и Севане

Արամ Պողոսյան. 1230-1240-ական թթ. մոնղոլական «չերիկ» զորամիավորներում հայ-վրացական ռազմական ուժերի ներկայության հարցի շուրջ.....428
Aram Poghosyan. On the Issue of The Presence Of Armenian-Georgian Military Forces in the Mongolian Units Cherig in the 1230-1240s
Арам Погосян. О вопросе присутствия армяно-грузинских военных сил в монгольских воинских соединениях «черик» в 1230-1240-х годах

Ռոբերտ Սուքիասյան. Սեբաստիայի հայության դեմ կիրառված պետական տնտեսական քաղաքականությունը 1913-1915թթ.....436
Robert Sukiasyan. State Economic Policy towards Armenians in Sebastia in 1913-1915
Роберт Сукиасян. Государственная экономическая политика в отношении армян Себасти в 1913-1915 годах

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲՈՆ
TRIBUNE OF YOUNG SCIENTIST
ТРИБУНА МОЛОДОГО УЧЕНОГО

Նարեկ Սուքիասյան. Սուննիական արմատականացման արտահայտումները Ադրբեջանում.....445
Narek Sukiasyan. The Manifestations of Sunni Radicalism in Azerbaijan
Нарек Сукиасян. Проявления суннитского радикализма в Азербайджане

Սիրանուշ Վարդանյան. Կրոնական իրավիճակն Ադրբեջանի Հանրապետության թալիշաբնակ տարածքներում (2010-2018).....453
Siranush Vardanyan. The Religious Situation in Talyshes Inhabited Regions of Republic of Azerbaijan (2010-2018)
Сирануш Варданян. Религиозная ситуация в талышских населенных пунктах Азербайджанской Республики (2010-2018 гг.)

ԶԿԻԱԴ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՎԱԽՔՈՒՄ 1990-1993 ԹԹ.*

ՀՏԴ 93/94(479.22)

ԱՂԱՎՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Խ. Արոյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
aghavni_martirosyan@mail.ru*

Վրաստանում անկախացումից ի վեր մշակվել է ազգայնական գաղափարախոսություն, որը հիմնվում էր վրաց բանաստեղծ և ազգայնական Ի.Ճավճավաձեի «Վրաց ազգայնականության եռամիասնությունը. հայրենիք, լեզու, կրոն» գաղափարի վրա և սկսեց իրագործվել Վրաստանի առաջին նախագահ Չվիադ Գամսախուրդիայի օրոք: Ազգային փոքրամասնությունները, մանավանդ իրենց բնօրրանում գոյատևողները, որոնք պատմական հանգամանքների բերումով Վրաստանի կազմում էին մնացել, բնականաբար, հայտնվում էին ռիսկային գոտում:

Ուսումնասիրության օբյեկտ Ջավախքի տարածաշրջանում տվյալ ժամանակաշրջանի ժողովրդագրական վայրիվերումների հետազոտության նպատակն է ցույց տալ, որ 2.Գամսախուրդիայի օրոք սրված վրաց-օսական և վրաց-աբխազական հարաբերությունների պատճառով Ջավախքում առկա խնդիրները սկսվում պարզապես ուշադրության չէին արժանանում, իսկ հետո սկսեցին դիտարկվել որպես դրսից կազմակերպվող անջատողական նկրտումներ: 2.Գամսախուրդիայի վարչակազմը, օգտվելով նորանկախ ՀՀ-ի՝ Արցախյան պատերազմի մեջ գտնվելու և Արցախն արտաքին աշխարհի հետ կապող կամուրջ լինելու հանգամանքից, Վրաստանում տիրող համընդհանուր տնտեսական ճգնաժամային ֆոնին սկսեց երկրամասում կենսապայմաններն արհեստականորեն վատթարացնել՝ տեղում սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային առաջընթացի բոլոր ուղիները փակելով, ինչն էլ տեղաբնիկ հայության մեծամասնությանը մղեց արտագաղթի: Սակայն ժողովրդագրական տվյալների բնման, համեմատության մեթոդով պարզ է դառնում հիմնական խնդիրը. 2.Գամսախուրդիայի վարչակազմի կողմից Ջավախքի հայաթափման քաղաքականության թաքնված հեռանկարը երկրամասի վերաբնակեցումն էր վրացիներով, հաճախ նաև աջարներով ու մեսխեթցի թուրքերով:

Բանալի բառեր՝ Ջավախք, Վրաստան, Գամսախուրդիա, ժողովրդագրություն, Ախալքալաք, Ախալցխա, Նինոծմինդա, Ծալկա:

Վրաստանում 1991-1992թթ.-ին տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի նախօրեին՝ 1990թ. նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահի ընտրություն, և ձայների 232 կողմ, 5 դեմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ հաղթանակ տարավ «Կլոդ սեղան-ազատ Վրաստան» խմբավորման առաջնորդ Չվիադ Գամսախուրդիան⁸⁰²: Անցնելով իշխանության գլուխ՝

* Հոդվածը ներկայացվել է 04.05.2019թ., գրախոսվել՝ 27.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

⁸⁰² Գլորուլո Յ: “Նախարարության օրագրություն, XX սալոն”, Թբիլիսի 2003, թ. 77

2. Գամասխուրդիան իր կողմնորոշումով բացահայտ ցույց տվեց, թե ինչ վերաբերմունք ունի Վրաստանի ոչ վրացի բնակչության նկատմամբ: Առավել ծայրահեղ վերաբերմունքի արժանացան հատկապես օտերը: Վրաստանի նորընծա առաջնորդը Նախևառաջ վերացրեց Հարավ-Օսական ինքնավար մարզը՝ օտերին Վրաստանում եկվորներ հայտարարելով: Հայերի պարագան մի փոքր այլ էր: Սկզբում Գամասխուրդիան հայամետ վերաբերմունք ցուցաբերեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին՝ ԼՂԻՄ-ը Հայաստանի մաս ճանաչելով: Սակայն այն հանգամանքը, որ Ջավախքում ևս ինքնավարության մեջ էին տեսնում բոլոր տեսակի սոցիալ-քաղաքական հարցերի լուծումը, սկսեց լուրջ թշնամանք արթնացնել վրացական ազգայնական շրջանակներում: Երկրում տիրող ընդհանուր ճգնաժամով արդարացված՝ Ջավախքում փորձ չէր արվում մեղմել սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, ինչը ստիպեց տեղաբնիկ հայությանը հայացքը դարձնել դեպի հայրենալքում:

Ջավախքում հայ տեղաբնիկ բնակչության տեսակարար կշիռի նվազեցման քաղաքականությունը Վրաստանում կիրառվել է դեռևս խորհրդային տարիներից: Անկախացումից հետո այդ հարցում վրացիներն ավելի անկաշկանդ սկսեցին գործել:

Դեռևս 1989թ.-ին անցկացված համամիութենական մարդահամարի տվյալներով բնակչության ազգային կազմն ընդհանուր առմամբ Վրաստանում հետևյալն էր. ընդհանուր 5,400,841 բնակչության մեջ 3,787,393-ը կամ 70,7%-ը եղել են վրացիներ, 437,211-ը կամ 8,1%-ը՝ հայեր, 341,172 կամ 6,3%-ը՝ ռուսներ, 307,556-ը կամ 5,7%-ը՝ ադրբեջանցիներ և այլն⁸⁰³: Վրաստանում ապրող հայերի գերակշիռ մասը ինչպես այժմ, ապրում էր Սամցխե-Ջավախք նահանգում⁸⁰⁴ և Ծալկայի շրջանում: Առաջինի պարագայում ընդհանուր երկրամասում հայերի թիվը 1989թ.-ի դրությամբ 124,327 էր: Ազգային կազմն ուներ հետևյալ տեսքը. Ախալցխայում 54,822 բնակիչներից 25,648-ը կամ 46,8%-ը վրացիներ էին, 23,469-ը կամ 42,8%-ը՝ հայեր, 3426-ը կամ 6,2%-ը՝ ռուսներ: Ադիգեթում 21,282 բնակչությունից 19,491-ը կամ 91,6%-ը վրացիներ էին, 1237-ը կամ 5,8%-ը՝ հայեր, 294-ը կամ 1,4%-ը՝ ռուսներ: 13,432-ոց Ասպինձայում 10,753-ը կամ 80,1%-ը վրացիներ էին, 2565-ը կամ 19,1%-ը՝ հայեր, 45-ը կամ 0,3%-ը՝ ռուսներ: Ախալքալաքի շրջանում 3005 վրացի բնակիչ կար, որոնք կազմում էին ընդհանուր թվի 4,3%-ը, 63,092՝ հայ, որոնք 91,3% գերակշիռ մասն էին կազմում, իսկ ռուսները 1737 էին կամ 2,5%-ը, ընդհանուր բնակչության թվաքանակը 69,108 էր: Լինոծմինդայի 37,895 բնակիչներից 454-ը կամ 1,2%-ը վրացիներ էին, 33,964-ը կամ 89,6%-ը՝ հայեր, 3161-ը կամ 8,3%-ը՝ ռուսներ⁸⁰⁵: Նույն մարդահամարի տվյալներով՝ Ծալկայի շրջանում ապրում էր 44,438 մարդ, կար հսկայական հունական համայնք՝ 27,127 բնակչությամբ՝ ընդհանուր բնակչության 61%-ի չափով, 12,671 -ը տեղաբնիկ հայերն էին՝ 28,5% -ով, 1613-ը կամ 3,5%-ը՝ վրացիներ, 2281-ը կամ 5,1%-ը՝

⁸⁰³ WB Report: Georgia Among Largest Emigration Countries. Civil Georgia. January 16, 2007.

⁸⁰⁴ 1994թ.-ին կազմավորված Սամցխե-Ջավախքի նահանգի Սամցխեի (Մեսխունիք, Ախալցխայի գավառ) հատվածը ներկայումս բաժանված է Ադիգեթի (մակերեսը՝ 799,5 կմ²), Ախալցխայի (1.010,3 կմ²), Ասպինձայի (Ասպինձակ, 825,3 կմ²) շրջանների: Ջավախքի (Ախալքալաքի գավառ) հատվածն իր հերթին վարչականորեն բաժանված է Ախալքալաքի (1.200 կմ²) և Լինոծմինդայի (Նախկին Բոգդանովկա, 1.400 կմ²) շրջանների: Ներկայիս Սամցխե-Ջավախք նահանգի մեջ է ներառված նաև Նախկին Գորիի գավառի մեջ մտնող Բորժոմի առողջարանային շրջանը (1.189 կմ²): Նահանգի կազմում ներառված չէ պատմական Ջավախքի անբաժանելի մաս կազմող Ծալկայի շրջանը, որի մակերեսը կազմում է 1.050 կմ²: [http://infogeo.ge/teritoriuli%20mowyoba/qalagebi/mtavari%20qverdi%20\(saqartvelos%20qalagebi\).html](http://infogeo.ge/teritoriuli%20mowyoba/qalagebi/mtavari%20qverdi%20(saqartvelos%20qalagebi).html) դիտվ. է 10.04.2019, 13:56:

⁸⁰⁵ Բոգդանովկայի շրջան (Տեղեկագիրք), Բոգդանովկա, 1992, էջ 23:

ադրքեջանցի վերաբնակիչներ, 746-ը կամ 1,8%-ը՝ ռուս, ուկրաինացի, բելորուս և այլ ընդհանրացված թվով խմբեր⁸⁰⁶:

Հարկ է նշել, որ չնայած Հայաստանն ու Վրաստանն այդ ժամանակ անկախացման ճանապարհին էին, այնուամենայնիվ արտաքին դիվանագիտական հստակ կուրս երկուստեք չէր մշակվել, Վրաստանի կազմում ապրող հայերի նկատմամբ ազգային քաղաքականությունը դեռևս խմորման փուլում էր, իսկ Գամսախուրդիան «հայ-վրացական դեռևս ոչ բնականոն հարաբերությունները» մեկնաբանում էր հայկական շրջանակներում առկա մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությամբ, որոնք իրականում բարձրաձայնում էին վրացական իշխանությունների կողմից խորհրդային տարիներից տարածաշրջանում լռեցված հիմնահարցերը:

1991թ.-ի հունվարի 29-ին Վրաստանի Գերագույն խորհուրդը հերթական նիստում ընդունեց տարածքային կառավարման մասին օրենք, ըստ որի՝ պետության տարածքում քաղաքների ու շրջանների կառավարման գործառույթն այդուհետև իրականացնելու էր պրեֆեկտը, որին տրվում էին մեծ լիազորություններ: Պրեֆեկտին նշանակում և ազատում էր Վրաստանի Գերագույն խորհուրդը, նա էլ իր հերթին իր գործունեության համար պատասխանատու էր Գերագույն խորհրդի նախագահին: Պրեֆեկտը բացարձակապես ինքնուրույն սկզբունքով նշանակում և ազատում էր ինչպես պրեֆեկտուրայի ստորաբաժանումներին, այնպես էլ տեղական հաստատությունների ղեկավարներին, կարող էր անհրաժեշտության դեպքում լուծարել տեղական իշխանության մարմինները և այլն: Այդպիսի լիազորություններով պրեֆեկտը կարող էր ազդել իր կառավարած տարածաշրջանի զարգացման վրա⁸⁰⁷: Բնականաբար, սա չէր կարող լինել պատահականորեն կայացրած որոշում, քանի որ Վրաստանի Գերագույն խորհուրդը, որ բռնել էր անկախացման ուղին, ստուգում էր արդեն միս ու արյուն ստացած իր ծրագրի նկատմամբ ազգային փոքրամասնությունների հակազդեցությունը:

Այն բանից հետո, երբ Վրաստանը հանրաքվեով հռչակեց իր անկախությունը, պրեֆեկտուրայի ինստիտուտն ավելի կատարելագործված ձևով սկսեց գործունեություն ծավալել: Այդ հանգամանքը չէր կարող անտարբեր թողնել Ջավախքի բնակչությանը: Երբ Վրաստանում ծայրաստիճան սրված վրաց-օսական հարաբերությունները լուծում էին ստանում ռազմական ճանապարհով, Ջավախքում իրադրությունը ևս լարվեց: Այս առումով շատ կարևոր է նշել մի հանգամանք. Օսեթիայում իրադրությունը սրվել էր՝ պայմանավորված ինքնավարությունը պահելու հանգամանքով: Սակայն Ջավախքում տրամադրությունները լարվել էին պրեֆեկտուրայի ինստիտուտի, ավելի կոնկրետ՝ դրա ղեկավարության նշանակման սկզբունքի և, առհասարակ, հակաիրավական, հակաժողովրդական, հակահայկական այն օրենքների պատճառով, որոնք կյանքի էր կոչում կենտրոնական իշխանությունը երկրամասում:

Պրեֆեկտուրայի ինստիտուտի ձևավորումից հետո Ջավախքում պրեֆեկտ նշանակվեց ազգությամբ հույն Ավրամ Մացուկատովը⁸⁰⁸, ինչն առաջ բերեց տեղաբնիկ հայ ազգաբնակչության մեծ դժգոհությունը, որն այդ պահին կարող էր ունենալ անկանխատեսելի հետևանքներ: Նախևառաջ պրեֆեկտի նշանակումն առանց տեղի ազգաբնակչության կարծիքը հաշվի առնելու արդեն հակաժողովրդավարական էր, բայց անկախ դրանից՝ ջավախքցիները հույս ունեին, որ ելնելով համընդհանուր շահերից՝ շրջանների պրեֆեկտներ կնշանակվեն տեղում

⁸⁰⁶ http://www.noravank.am/file/article/127_am.pdf, դիտվ. է 13.11.2016, 17:20:

⁸⁰⁷ «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1990, մարտի 2:

⁸⁰⁸ Скаков А., Внутриполитическая ситуация в Грузии, /Грузия: Проблемы и перспективы развития/, РИСИ, Москва, 2002., с. 264:

հեղինակություն վայելող անձինք, որոնք կկարողանային երկրամասի բնակչության և իշխանությունների միջև համագործակցային մթնոլորտ ստեղծել, կամ գոնե պատկերացում կունենային երկրամասի իրական խնդիրների մասին:

Մարտի 17-ին Ախալքալաքում տեղի ունեցավ շրջանի տնտեսությունների ղեկավարների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ նիստ, որը որոշեց մինչև Նոր ժողովրդավարական իշխանության ստեղծումը որպես շրջանը կառավարող մարմին հրավիրել լիազոր ներկայացուցիչների ժողով, ինչպես նաև ստեղծել կազմկոմիտե, որը տեղերում պետք է անցկացներ ժողովներ՝ լիազորներ ընտրելու համար: Նիստում կոչ արվեց բոլորտեղ ամսվա վերջում կայանալիք տեղական կառավարման մարմինների՝ ոչ ժողովրդավարական սկզբունքներով անցկացվող ընտրությունները, որպես որոշիչ գերակա մարմին ընդունել ու ճանաչել Նոր ստեղծված լիազորների ժողովների որոշումները⁸⁰⁹: Նոր կառավարող մարմին՝ ժողովրդական լիազորների խորհրդի մեջ մտնում էին 26 հոգի, նախագահն էր Սամվել Պետրոսյանը: Վրաստանի իշխանությունը սա համարեց «գրսից կազմակերպվող արհեստական գործընթաց», մասնավորապես վրաց արտգործնախարար Գ.Խոշտարիան հայտարարեց, որ ԽՍՀՄ փլուզման դեմն առնելու նպատակով անձամբ Գորբաչովն է պառակտում Վրաստանի ներքին ուժերը⁸¹⁰:

Իրադրությունը շտկելու համար իշխանությունը Մացուկատովին ազատեց պրեֆեկտի պաշտոնից՝ կարծելով, որ խնդիրը Նրա անձի մեջ է, և պրեֆեկտ Նշանակեց այս անգամ ազգությամբ վրացի, մայրական կողմից հայկական ծագմամբ Վալոդյա Ալեյիշվիլուն⁸¹¹: Այդ քայլը չմեղմեց երկրամասի բնակչության դժգոհությունն ու զայրույթը, իսկ առջևում սպասվող նախագահական ընտրություններից առաջ հայերի վստահությունը կորցնելը ենթադրում էր կորցնել համապատասխան թվով քվեներ: Յետևաբար Ալեյիշվիլին մայիսի 25-ին ազատվեց Ախալքալաքի շրջանի պրեֆեկտի պաշտոնից: Սակայն մեծ եղավ տեղի հայության հիասթափությունը, երբ հուլիսի 15-ին պրեֆեկտ Նշանակվեց Ախալքալաքի շրջանի պետանվտանգության կոմիտեի նախկին նախագահ, դարձյալ ազգությամբ վրացի Վ. Ինասարիձեն⁸¹²:

Նմանատիպ իրադրություն էր հարևան Բոգդանովկայի շրջանում⁸¹³, որտեղ իշխանությունները վարում էին ավելի խորը մշակված քաղաքականություն. այդտեղ ևս առանց ժողովրդի ընտրական իրավունքի հաշվառման պրեֆեկտ Նշանակվել էր ազգությամբ վրացի Չազա Արձևանիշվիլին⁸¹⁴, որն անգամ չէր տիրապետում հայերենին (Վրաստանի կառավարության որոշման համաձայն՝ Չավախթում Նշանակվելիք պրեֆեկտների համար պարտադիր պայման էր հավասարապես փայլուն տիրապետել հայոց և վրաց լեզուներին): Իրադրությունը բավականին սրվեց, տեղի ունեցան ժողովրդական ինքնաբուխ ցույցեր, որոնք ստիպեցին կառավարությանն այդտեղ ուղարկել պատվիրակների: Վերջիններս եկան, տվեցին զանազան խոստումներ ու հեռացան՝ տպավորություն թողնելով, որ ժամանակ են շահում մինչև ապագա նախագահական ընտրությունները: Պրեֆեկտի պաշտոնում Նշանակումները Նույնատիպ սցենարով էին ընթացել նաև երկրամասի մյուս շրջաններում. Ախալցխայում պրեֆեկտ էր Նշանակվել իրեն կոմունիստների ռիսերիմ թշնամի հայտարարած ոմն հոգևորական Յայր Թեոդորը (աշխարհիկ անունը՝ Թամազ

⁸⁰⁹ «Հայաստանի Հանրապետություն», 1990, մարտի 18:

⁸¹⁰ «Ազգ», Երևան, 1991, մարտի 30:

⁸¹¹ «Ազատամարտ», Երևան, 1995, մայիսի 2:

⁸¹² Նույն տեղում, մայիսի 7:

⁸¹³ Առանց տեղի բնակչության կարծիքը հաշվի առնելու՝ 1991թ.-ի սկզբին շրջանը վերանվանվել է Նինոծմինդա, ինչը թարգմանաբար նշանակում է Սուրբ Նինո: Տե՛ս «Ասպնջակ», Երևան, 1991, մարտի 25:

⁸¹⁴ **Սարգսյան Վ.**, Սամցխե-Չավախթ-Թեոդթը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում, Երևան, 2006, էջ 90:

Ամբողջաձեռք, որից հետո 1991թ.-ի օգոստոսի 17-ին պրեֆեկտ նշանակվեց ազգությամբ վրացի Չ.Խարիսչարիշվիլին: Վրաստանում ընդունվող օրենքների մեծամասնությունը չէր բխում երկրի ազգային փոքրամասնությունների շահերից: Ամենացայտունը լեզվի մասին օրենքն էր, որի 13-րդ հոդվածի համաձայն դատավարությունը պետք տեղերում իրականացվեր վրացերեն լեզվով⁸¹⁵:

Որքան էլ վրացական իշխանությունները փորձեին արդարացնել, որ երկրում պետական լեզուն վրացերենն է, միևնույն է, աբխազական սցենարի կողքին ջավախահայերին զրկել վրացերենին զուգահեռ սեփական լեզվով դատավարություններ ու կարևոր այլ ոլորտներում գործունեություն իրականացնելու իրավունքից, նշանակում էր հայ ազգաբնակչության էթնիկ իրավունքների ուղղակի ոտնահարում: Տեղի հայ ազգաբնակչությունը, կարելի է ասել, մեծամասամբ վրացերենին չէր տիրապետում:

Մեկ այլ լուրջ խնդիր էր Վրաստանում ընդունված հանրակրթության մասին օրենքը, որում ոչ մի խոսք չկար մեզ հետաքրքրող տարածաշրջանում ազգային լեզվի ու պատմության դասավանդման մասին⁸¹⁶: Ջավախահայ երիտասարդության առաջ իրար հետևից փակվում էին սեփական հողում առաջընթացի բոլոր հնարավորությունները: 1991թ.-ի կեսերին Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումում փակվեց հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետը, որն առանց այդ էլ միակն էր դասավանդման լեզվով: Իսկ դրա փակումը ենթադրում էր, որ Ախալցխայում հայ երիտասարդությունը լեզվի պատճառով այլևս մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն չի ունենալու: Վրաստանի իշխանությունը բացահայտ ձևով դրսևորում էր այլընտրանք չունենալու քաղաքականություն:

Ախալքալաքի և Նինոծմինդայի բնակչությունը վերոնշյալ խնդիրների կապակցությամբ նամակ-դիմում հղեց Չ.Գամսախուրդիային, որում ընդհանուր վրդովմունք հայտնելով՝ ակնկալվում էր նախագահի արդարացի մոտեցումը: Վերոնշյալ շրջանների համար Վրաստանի Գերագույն խորհուրդը կայացրեց այնպիսի որոշումներ, որոնցով բարձրացված բողոքները լռեցնելու համար սահմանվում էր խնդիրների մասնակի լուծում. կարծես փորձ էր արվում անգործ չերևալուց խուսափել այն պարագայում, երբ տարածաշրջանի կառավարչի պաշտոնի շուրջ լուրջ աղմուկ էր բարձրացել: 1991թ.-ի հուլիսի 25-ին Վրաստանի Գերագույն խորհրդի որոշումով «պարզաբանում» մտցվեց Վրաստանի Սահմանադրության 75-րդ հոդվածի կետերի մեջ⁸¹⁷: Թույլ տրվեց պետական վրացերեն լեզվի հետ մեկտեղ գերատեսչական մարմիններում և այլ կառույցներում օգտագործել տեղի ժողովրդի լեզուն: Թույլատրվում էր նաև ռուսերենի կիրառումը⁸¹⁸:

Նման մթնոլորտում, երբ տարածաշրջանում օրհասական, կարևոր խնդիրների արմատական լուծումը բխում էր հենց վրացական շահերից, իսկ ջավախահայության կողմից դրանց առաջ քաշելը դիտվում էր աբխազական սցենարի հնարավոր կրկնության փորձ Ջավախքում, իշխանությունները սկսեցին իրականացնել կոսմետիկ փոփոխություններ, որոնք իրավիճակը ոչ թե մեղմում էին, այլ ընդհակառակը՝ սրում: Ի վերջո, այդ ամենը հանգեցրեց նրան, որ ջավախահայության մեջ լայն տարածում ստացավ պատմական հայրենիքից դուրս նորմալ կենսապայմանների որոնման միտքը,

⁸¹⁵ Wheatley J. The Integration of National Minorities in the Samtskhe-Javakheti and Kvemo Kartli provinces of Georgia, Flensburg, 2009, p. 7.

⁸¹⁶ Ի դեպ, եթե հայոց լեզու առարկան, այնուամենայնիվ, դասավանդման ցածր մակարդակով Ջավախքի դպրոցական ծրագրի մեջ մտցնել հաջողվեց, ապա հայոց պատմության հետ կապված իրադրությունը վերաճել է հիմնախնդրի և առկա է առ այսօր:

⁸¹⁷ Վրաստանի սահմանադրության 74-րդ հոդվածով երկրի ողջ տարածքում պետական լեզուն վրացերենն էր և, ըստ այդմ, այն էր օգտագործվում պետական հասարակական օրգաններում, կրթամշակութային այլ հաստատություններում:

⁸¹⁸ Սարգսյան Վ., Նշվ. աշխ., էջ 99:

ինչև ինքնին արդեն պատմական Ջավախքի ժողովրդագրական պատկերի համար ընդհանրապես և մասնավորապես տեղաբնիկ հայերի տեսակարար կշռի համար աղետի մեկնարկ էր:

Ջավախքում իրավիճակը սրվելուն նպաստեց հատկապես վարչապետ Թ.Սիգուայի՝ 1991թ.-ի մայիս 23-ի թիվ 419 կարգադրությունը, որով աքսորավայր պետք է ստեղծվեր Նինոծմինդայի շրջանում⁸¹⁹: Դրա համար կատարվում էին մանրակրկիտ ճշգրտումներ աքսորավայրի տեսակի ու ներքին կանոնակարգի վերաբերյալ⁸²⁰: Որոշումը, բնականաբար, պատահական չէր, և Նինոծմինդայի շրջանը որպես աքսորավայրի տարածք ընտրելը հետապնդում էր կոնկրետ նպատակներ.

- աքսորի հետևանքով տարածաշրջան կբերվեին եթևիկ այլ տարրեր, ինչը կնպաստեր շրջանում կարճ ժամանակում շրջանի ժողովրդագրական պատկերի փոփոխությանն՝ ի վնաս տեղաբնիկ հայերի:
- աքսորավայրի կառուցման կոնկրետ վայրի ընտրությունից կարելի էր հասկանալ, որ աքսորի պատրվակով օտար տարր բնակեցնելով Նինոծմինդայի՝ Հայաստանի հետ ունեցած սահմանային միջանկյալ գոտում, ի վերջո ստեղծվելու էր բուֆերային գոտի ջավախահայության ու Հայաստանի միջև, ինչն այլևս կթուլացներ կապը հայրենիքի հետ:
- աքսորի ենթարվածները, բնականաբար, լինելու էին հանցագործ, օրինախախտ մարդիկ, իսկ նման տարրի, այն էլ օտարազգի, ներկայությունը հայ ազգաբնակչության շրջանում մեծացնելու էր ազգամիջյան բախումների ռիսկերը, ստեղծելու էր մշտական լարված մթնոլորտ, որին հավելյալ այլ՝ տնտեսական, կրթամշակութային տարատեսակ խնդիրների չդիմանալով՝ հայ ազգաբնակչությունը լուծումը գտնելու էր ծննդավայրից արտագաղթելու մեջ:

Նինոծմինդայի շրջանի պրեֆեկտ Չ.Արձևանիշվիլին, քաջ գիտակցելով, որ ջավախահայության հակազդեցությունը չի ուշանա, ինքն առաջինը հայտարարեց, որ այդտեղ աքսորավայր կառուցելու որոշումն անհրականանալի է մի շարք պարզ պատճառներով, որոնց մասին ինքն է կառավարությանը տեղեկացրել: Սակայն ջավախահայությունը դրանով չբավարարվեց և պետական կառավարական վերին օղակներին բողոքագիր ուղարկեց այդ որոշման առնչությամբ՝ ներկայացնելով դեմ լինելու տասնյակ հիմնավոր փաստարկներ, որոնցից ամենաառաջնայինը անկեղծորեն նշվում էր Հայաստանի հետ սահմանամերձ գոտում աքսորավայրի առկայության դեպքում Մայր Հայաստանի հետ կապի թուլացումը⁸²¹:

1991թ.-ի ապրիլի 29-ին Արևմտյան Վրաստանում, մասնավորապես Ռաճայի տարածքում տեղի ունեցավ ուժգին երկրաշարժ, որի հետևանքով զոհվեց մոտ 200 մարդ, փլուզվեց մոտ 46 000 շինություն և 1000 արդյունաբերական օբյեկտ⁸²²: Հազարավոր մարդիկ մնացին անօթևան, և նրանց բնակարանների հարցով զբաղվելու համար 1991թ.-ի հուլիսի 26-ին նախագահ Գամսախուրդիայի հրամանագրով ստեղծվեց «Ժամանակավոր արտագարկ շտաբը» (այսուհետև՝ ԺԱՇ), սակայն այն ստեղծվել էր, որքան էլ մեզ համար տարօրինակ թվա, Սամցխե-Ջավախքի

⁸¹⁹ Բոգդանովկայի շրջան, ի հեճուկս հայ բնիկ ազգաբնակչության, վրաց եկեղեցու սուրբ Նինոյի անուկով կոչելուց հետո առաջանում է տրամաբանական գավեշտ. այդքան պաշտելի սրբի անունը կրող տարածքը կարող էր միայն որպես աքսորավայրի նպաստավոր գոտի դառնալ, թե՛ վրացական իշխանությունները հերթական ծրագիրն էին մշակում շրջանի հայ ազգաբնակչությանը վնասելու համար: Ընդ որում՝ Վրաստանում ինչքան էլ եղավ իշխանափոխություն, մինչ օրս պարզ չէ՝ Նինոծմինդան աքսորավայր դարձնելու որոշումը վերջնականապես օրակարգից դուրս բերվե՞լ է, թե՞ ոչ:

⁸²⁰ «Ասպլջակ», 1991, օգոստոսի 10:

⁸²¹ Обращение населения Ахалкалского и Ниноцминского районов Республики Грузии ко всем демократическим силам Грузии, (տե՛ս Սարգսյան Վ., նշվ. աշխ., էջ 100):

⁸²² <http://www.ambebi.ge/sazogadoeba/86767-qsasqarstheslosshi-9-baslisasni-mistsissdzvris-alsbasthosbac-arssesbobsq.html> դիտվ. 20.08.2016. 20:37:

երկրամասում: Վրացական կողմի հավաստմամբ՝ այդ շտաբը ստեղծվել էր երկրաշարժի պատճառով անօթևան մնացածների բնակարանների հարցը լուծելու համար⁸²³:

Սակայն այն փաստը միայն, որ շտաբը ստեղծվել էր ոչ թե աղետի գոտում կամ առավել թեթև բնակեցված որևէ այլ վայրում՝ հենց Ջավախքում, արդեն իսկ ստիպեց հայերին առավել զգոն լինել դրա գործունեության նկատմամբ: Նախ նշենք, որ դեռևս 1990թ.-ի կեսերից արգելվել էր տեղացիներին զբաղվել տների առքուվաճառքով⁸²⁴: Վերոնշյալ աղետից հետո, երբ հարց էր բարձրացել դրանից տուժածների վերաբնակեցման մասին, վրացական իշխանությունների դիտարկման տակ ընկավ միանգամից Ջավախքը, և ամենևին էլ պատահական չէր, որ ԺԱՇ-ը բացվեց հենց այդտեղ: Վրացի վերաբնակիչներին Ջավախքում պետք է հաստատեին, ինչի համար որպես նախորդ օրենքի շարունակություն՝ ընդունվեց նոր օրենք այն մասին, որ Ջավախքում, մասնավորապես Ախալցխայի, Ադիգենի, Ախալբալաքի, Ասպինձայի և Նինոծմինդայի շրջաններում գտնվող տների առքուվաճառքը պետք է կազմակերպի հենց ԺԱՇ-ը, այն ենթարկվելու և հաշվետու էր լինելու միայն երկրի նախագահին, տների առքուվաճառքի կազմակերպման համար պետական քյուջեից ստանալու էր ֆինանսավորում, ազատված էր լինելու բոլոր տեսակի պետական հարկերից ու տուրքերից, ինչպես նաև Սամցխե-Ջավախքի վերոնշյալ շրջաններում ունենալու էր առանձին գրասենյակներ: Հրահանգվում էր նաև տեղի կոլտնտեսություններին և այլ կառույցների աշխատանքով ապահովել վրաց վերաբնակիչների՝ ներկայացված ցուցակներում նշված մարդկանց, երաշխավորել այդտեղ նոր հաստատված վրաց ընտանիքների անվտանգությունը, իրավունքների պաշտպանությունը և այլն⁸²⁵:

Բացի այդ ամենից, Գամսախուրդիայի իրամանով ստեղծվել էր նաև Ժողովրդագրական հիմնադրամ, որի գոյության պայմաններում արգելվում էր անհատներին տների առքուվաճառքի գործարքներում գնորդի դերում հանդես գալ, քանի որ վերոնշյալ հիմնադրամն էր լիազորված գնել երկրամասից հեռացողների տները: Ի՞նչն էր այս ամենի մեջ, ի վերջո, ամենավտանգավորը Ջավախքի համար. ԺԱՇ-ը, ինչպես նաև Ժողովրդագրական հիմնադրամը, Սամցխե-Ջավախքում գնում էին տներ և հող տանում, որ դրանք, որպես սեփականություն, հանձնվեին բացառապես վրացիներին: Արևմտյան Վրաստանում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացածները ԺԱՇ-ի ջանքերով վերաբնակեցվում էին միտումնավոր հենց Ջավախքում, իսկ Ժողովրդագրական հիմնադրամը վերահսկում էր, որ համընդհանուր տնտեսական և այլ խնդիրների հետևանքով երկրամասը լքած հայերի փոխարեն անպայման այդտեղ գան և բնակվեին վրացիներ⁸²⁶:

Փաստորեն՝ վրացական իշխանություններն անում էին ամեն հնարավորը՝ Ջավախքում ազգաբնակչության տեսակարար կշիռը ի վնաս բնիկ հայերի ձևափոխելու համար՝ տարաբնույթ պատճառներով դեպի երկրամաս կազմակերպելով վրաց, ինչ-որ չափով նաև աջար ազգաբնակչության ներհույք: Ջավախահայերը, որ վերաբնակեցման գործընթացի կազմակերպմանը հետևում էին լուռ մտավախությամբ, ի վերջո բարձրացրին իրենց բողոքի այիքը. վրացական իշխանություններին հղվում էին բողոքի նոտաներ, նամակ-դիմումներ, որոնցում վկայակոչվում էր այն հանգամանքը, որ խտրականություն և անարդարություն է ցուցաբերվում ջավախահայության նկատմամբ, քանի որ երբ 1986թ.-ին երկրամասում ևս եղել էր ուժգին երկրաշարժ, և հարյուրավոր ջավախահայեր ևս կորցրել էին իրենց

⁸²³ https://zviadgamsakhurdia.wordpress.com/2014/10/08/%A2/#_ednref2 դիտվել է 20.08.2016.

⁸²⁴ **Лом Х.**, Духоборы в Грузии: Исследование Вопросы Земельной Собственности и Межэтнических Отношений в районе Ниноцминда, Фленсбург, 2006, стр. 35.

⁸²⁵ https://zviadgamsakhurdia.wordpress.com/2014/10/08/%A2/#_ednref2 դիտվել է 20.08.2016.

⁸²⁶ «Ազատամարտ», 1991, հուլիսի 21:

բնակարանները, իշխանությունները չհոգացին նրանց խնդիրների լուծումը՝ թողնելով այդ մարդկանց բախտի քմահաճույքին, և նրանցից շատերը ստիպված եղան հեռանալ Ջավախքից: Ի հավելումն նշվում էր, որ մինչ Գամաախուրդիան հիմնում էր ժամանակավոր արտակարգ շտաբը և ապահովում նաև այլ կառույցների միջոցով վրացիների ներհոսքը երկրամաս, Ջավախքում ջրհեղեղի խոշոր հոսանքների պատճառով տուժում էր տնտեսությունը, տեղաբնիկները հայտնվել էին շատ վատ կացության մեջ, սակայն այդ հարցին ևս իշխանությունները չեն բարեհաճել անդրադառնալ և լուծում տալ⁸²⁷:

Սամցխե-Ջավախքում անկանոն ու չհամակարգված էին անտառային տնտեսության ու հողօգտագործման հարցերը. երկրամասի բնակչությունը սահմանված համապատասխան օրենքներով զրկված էր հողի սեփականության իրավունքից՝ այդպիսով նաև չկարողանալով հողն օգտագործել ըստ նպատակի՝ մշակաբույսերի աճեցման, շինարարության և այլնի համար: Ախալքալաքի շրջանի ագրոարդյունաբերական միավորումը ստեղծված վիճակի կապակցությամբ նամակ ուղղեց Վրաստանի կառավարությանն ամռնթեր Յոթօգտագործման և հողշինարարության վարչությանը, սակայն ստացված պատասխանն ըստ էության պարզ էր դարձնում, որ կառավարությունը մտադիր չէ այդ հարցին առհասարակ անդրադառնալ: Իսկ պատճառաբանությունն այն էր, որ կառավարության որոշմամբ ժամականավորապես արգելակվել է հողերի, նաև տնամերձ հողակտորների բաժանորդագրության գործը, իսկ ինչ վերաբերում էր ժամանակավոր օգտագործման հողերին, ապա պետության գործող հողային կանոնադրության 79-րդ հոդվածը թույլ էր տալիս տնտեսությունների դիրեկցիաներին ու կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներին կես տարի ժամկետով ժամանակավոր հողատարածք հատկացնել գյուղում ապրող ու աշխատող բանվորներին, ուսուցիչներին, այլ մասնագետների ընտանիքներին: Ընդ որում արգելվում էր այդ հողակտորների վրա իրականացնել որևէ տեսակի շինարարական աշխատանքներ՝ ընդհուպ մինչև ցանկապատելը⁸²⁸:

Ինչ վերաբերում է անտառտնտեսությանը, ապա երկրամասի անտառների հիմնական մասը նախ գտնվում էր Ասպինձայի անտառտնտեսության տրամադրության տակ, այսինքն՝ բավականին հեռու էր և մատչելի չէր դրանց օգտագործումը: Բացի այդ, վրացական իշխանությունները այդ հարցում ստեղծում էին արհեստական խոչընդոտներ՝ սահմանելով զանազան դժվար կատարելի պահանջներ՝ անտառտնտեսությունների օգտագործման թույլտվությունների ձևակերպման համար⁸²⁹:

Այսպիսով՝ վերոնշյալ տվյալների հիման վրա կարելի է եզրահանգել, որ Սամցխե-Ջավախք երկրամասում բացահայտ ազգային խտրական քաղաքականություն կիրառվեց Վրաստանի անկախացումից հետո երկրի իշխանությունը ստանձնած 2.Գամաախուրդիայի կողմից, որը, վախենալով օսական ու աբխազական սցենարի կրկնությունից, Ջավախքում տեղի սոցիալ-տնտեսական խնդիրների բարձրաձայնումը սկսեց դիտարկել որպես անջատողական նկրտում և հիմք դրեց ճարահատ արտագաղթի միջոցով տեղաբնիկ հայերի տեսակարար կշռի նվազեցման գործընթացին, որին հետևեց զանազան պատրվակներով երկրամասի վերաբնակեցումը վրացիներով, նաև մահմեդական տարրերով: Այդ քաղաքականությունը «ժառանգություն ստացան» նաև երկրի հաջորդ ղեկավարները, այնինչ վերոնկարագրյալ քայլերը դեմոգրաֆիկ ու ռազմավարական վտանգ էին պարունակում առաջին հերթին Վրաստանի համար:

⁸²⁷ Ըստ պաշտոնական տվյալների՝ ընդհանուր վնասը, որ կրել էր երկրամասը վերոնշյալ ջրհեղեղի հետևանքով, կազմում էր շուրջ 4 մլն ռուբլի:

⁸²⁸ <http://www.mitq.org/?l=arm&id=22&news=938> դիտվ. է 21.08.2016, 23:30:

⁸²⁹ Սարգսյան Վ., Ջավախքը 1988-2008 թթ., Երևան, 2009, էջ 37:

ZVIAD GAMSAKHURDIA'S DEMOGRAPHIC POLICY IN JAVAKHK IN 1990-1993**AGHAVNIK MARTIROSYAN***Armenian State Pedagogical University ASPU after Kh. Abovyan, PHD Student of the Chair of the History, Yerevan, Republic of Armenia*

Since the independence of Georgia, a nationalist ideology was developed which was based on the Georgian poet and nationalist I. Chavchavadze's "Trinity of Georgian Nationalism: homeland, language, religion" ideology and began to be realized during the years of governance of Georgia's first president Zviad Gamsakhurdia. National minorities, especially those who survive in their cradle, those who because of historical circumstances were staying in Georgia's territory, naturally were appeared in the risk zone.

The aim of the study of demographic fluctuations in the region of Javakheti in that period of time is to show that in the beginning under the rule of Zviad Gamsakhurdia, the problems existing in Javakheti were not taken into account because of the strained Georgian-Ossetian and Georgian-Abkhazian relations and then they began to be viewed as separatist aspirations from outside. Using the fact that the newly independent Republic of Armenia was in Artsakh war and took the advantage of Georgia as a bridge to connect Armenia to the world, Z. Gamsakhurdia administration, in the context of the global economic crisis, started to worsen the living conditions in the region. He closed all the ways of socio-economic and educational-cultural progressive directions, which forced the majority of Armenians to emigrate. But after the investigation and comparison of demographical data the main problem becomes clear: the hidden prospect of the Gamsakhurdia administration's policy of deportation of Javakheti was the resettlement of the territory by Georgians, often Adjacent and Meskhetian Turks.

Keywords: Javakhk, Georgia, Gamsakhurdia, Demographics, Akhalkalaki, Akhaltskha, Ninotsminda, Tsalka.

**ДЕМОГРАФИЧЕСКАЯ ПОЛИТИКА ЗВИАДА ГАМСАХУРДИЯ
В ДЖАВАХКЕ В 1990-1993 ГОДАХ****АГАВНИК МАРТИРОСЯН***аспирант кафедры истории Армении АГПУ им. Х. Абовяна,
г.Ереван, Республика Армения*

С момента обретения независимости в Грузии была разработана националистическая идеология, основанная на идеях грузинского поэта и националиста И. Чавчавадзе "Троица грузинского национализма: Родина, язык, религия", и она начала реализовываться во времена правления первого президента Грузии Звиада Гамсахурдия. Национальные меньшинства, особенно те, кто, выжив в своей колыбели, остались частью Грузии из-за исторических обстоятельств, естественно, оказались в зоне риска.

Исследование, целью которого является изучение демографических потрясений данного периода в регионе Джавахка, должно показать, что из-за сложных грузино-осетинских и грузино-абхазских отношений при Гамсахурдии проблемы в Джавахке сначала просто игнорировались, а затем стали восприниматься как организованные извне сепаратистские устремления. Правительство З. Гамсахурдия, используя тот факт, что новонезависимая Республика Армения находилась в военном положении из-за Арцаха, а сама Грузия для Армении являлась мостом связи с внешним миром, начало на фоне всеобщего кризиса в стране искусственно ухудшать условия в регионе Джавахка, закрывая все пути социально-экономического и образовательно-культурного прогресса, что побудило большинство местных армян эмигрировать. Основная проблема становится понятной методом сравнения и анализа демографических данных. Перспективой скрытой политики правительства З. Гамсахурдия по депортации Джавахка было заселение этой территории грузинами, а также аджарами и турками-месхетинцами.

Ключевые слова: Джавахк, Грузия, Гамсахурдия, демография, Ахалкалак, Ахалцихе, Ниноцминда, Цалка.